

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՒՆԻՍԻ 24-ԻՆ ԱՄՄԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՐԴԱՆԱՆԻ ՆԱՇԻՄՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՆԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

10 դեկտեմբերի 2013թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Նովհաննիսյանի (նախագահող, զեկուցող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Նայասրանի Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասրանի Նանրապետության կրթության եւ գիտության նախարար Ա. Աշոտյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի հունիսի 24-ին Ամմանում ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության կառավարության եւ Նորդանանի Նաշիմյան Թագավորության կառավարության միջեւ կրթության եւ գիտության բնագավառներում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի՝ 26 նոյեմբերի 2013թ. ՆՏ սահմանադրական դարարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասփանի Նանրապետության սահմանադրական դարարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

Նայասփանի Նանրապետության կառավարության եւ Նորդանանի Նաշիմյան Թագավորության կառավարության միջեւ կրթության եւ գիտության բնագավառներում համագործակցության մասին համաձայնագիրն ստորագրվել է 2013թ. հունիսի 24-ին Ամմանում:

Նամաձայնագրի նպատակն է Նայասփանի Նանրապետության կառավարության եւ Նորդանանի Նաշիմյան Թագավորության կառավարության միջեւ կրթության եւ գիտության բնագավառներում համագործակցության հաստատումն ու զարգացումը:

Սույն Նամաձայնագրով Նայասփանի Նանրապետությունը փոխադարձության սկզբունքով պարտավորվում է.

- համագործակցել կրթության եւ գիտության բնագավառներում՝ սույն Նամաձայնագրի, միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի եւ սկզբունքների, ինչպես նաեւ Նամաձայնագրի կողմ երկրների ներպետական օրենսդրության համաձայն,

- նպաստել Նամաձայնագրի կողմ երկրներում միջնակարգ, միջին եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտահետազոտական ինստիտուտների եւ այլ հաստատությունների միջեւ անմիջական կապերի հաստատմանն ու զարգացմանը,

- գիտական համագործակցությունը զարգացնելու եւ ընդլայնելու նպատակով՝ մշակել եւ իրականացնել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող գիտահետազոտական ծրագրեր եւ նախագծեր, ինչպես նաեւ փոխանակել ձեռք բերված արդյունքները, գիտական եւ կրթական տեղեկատվությունը,

- տրամադրել կրթաթոշակներ Նորդանանի Նաշիմյան Թագավորության քաղաքացիներին՝ միջին մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանելու, ինչպես նաեւ գիտական հաստատություններում գիտահետազոտական գործունեություն ծավալելու համար,

- բանակցել, փոխադարձ համաձայնությամբ, Կրթական վկայագրերի, գիտական աստիճանների եւ ակադեմիական կոչումների հավասարեցման մասին համաձայնագիր կնքելու շուրջ,

- կրթական եւ գիտական խնդիրների լուծման համար փոխադարձ աջակցություն ցուցաբերել այն միջազգային կազմակերպությունների շրջանակներում, որոնց աշխատանքներին Նամաձայնագրի կողմերը մասնակցում են,

- իր ուսումնական հաստատություններում նպաստել մյուս Կողմի լեզվի, գրականության, պատմության եւ մշակույթի ուսուցման եւ դասավանդման գործընթացին, ինչպես նաեւ օժանդակել մասնագետների, մեթոդական ձեռնարկների, դասագրքերի փոխանակմանը,

- խրախուսել գիտաշխատողների, պրոֆեսորների, ուսուցիչների, ուսանողների եւ աշակերտների փոխադարձ այցելությունները՝ կրթության եւ գիտության բնագավառներում ձեռք բերած փորձն ու նվաճումները փոխանակելու նպատակով,

- Նամաձայնագիրն իրականացնելու համար մշակել համագործակցության ծրագրեր՝ կոնկրետ գործողություններ իրականացնելու եւ համագործակցության պայմաններն ու ձեւերը կանոնակարգելու համար,

- Նամաձայնագրի մեկնաբանումից կամ իրականացումից առաջացած ցանկացած վեճ կարգավորել քննարկումների եւ բանակցությունների միջոցով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2013 թվականի հունիսի 24-ին Ամմանում ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության կառավարության եւ Նորդանանի Նաշիմյան Թագավորության կառավարության միջև կրթության եւ գիտության բնագավառներում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Վ. ՆՈՎՏԱՆՆԻՍՅԱՆ

10 դեկտեմբերի 2013 թվականի
ՍԴՈ-1128